ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 91/4

10-ը հուլիսի 2026 թվականի

2026-2027 ուստարում ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին տրամադրվող անվանական կրթաթոշակների քանակն ու չափը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, ինչպես նաև «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 35-րդ կետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հաստատել ԵՊՀ ԻՄ-ում 2026-2027 ուստարում ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին տրամադրվող անվանական կրթաթոշակների քանակն ու չափը համաձայն հավելվածի։
2 Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից։

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2026թ. հուլիսի 10-ի նիստի թիվ 91/4 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ_____Մ.Մ. Օթարյան

ԵՊՀ ԻՄ-ում 2026-2027 ուստարում ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին տրամադրվող անվանական կրթաթոշակների քանակն ու չափը

	Ստորաբաժանումը	**Քանակը/ հատ**	**Չափը/դրամով**
1	Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	**4 (**Շառլ Ազնավուր, Գրիգոր Նարեկացի, Դավիթ Անհաղթ, Մխիթար Գոշ)	10 000
2	Բնական գիտությունների ֆակուլտետ	**1 (**Համլետ Կարայան)	10 000
3	Տնտեսագիտության ֆակուլտետ	**2 (**Սահակ Զորափորեցի, Շավարշ Մարգարյան)	10 000
4	Կիրառական արվեստի ֆակուլտետ	**1 (**Սպարտակ Սարգսյան)	10 000
5	Համամասնաճյուղային	**3 (**ԵՊՀ, Արտակ Ցուցուլյան, Արցախյան 44-օրյա պատերազ-մում անմահացած ԵՊՀ ԻՄ ուսանողների և շրջանավարտ-ների անուններով, յուրաքանչյուր կիսամյակում մեկի անվամբ)	10 000